

12188



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան



«07» 11 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 236 - 24

Նախաձեռնող՝

«Շող-Մակ» ՍՊԸ

ք. Երևան, Արտաշատի խճուղի 2/14

Գործունեությունը՝

Շենգավիթ վարչական շրջանի Արտաշատի խճուղի 2/14
հասցեում արտադրական (կարի արտադրամաս)

շենքի կառուցում

ք. Երևան

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 236 - 24

« 07 » հուլիսի 2024թ.

Շենգավիթ վարչական շրջանի Արտաշատի խճուղի 2/14 հասցեում արտադրական (կարի արտադրամաս) շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Շող-Մակ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն (ՇՄԱԳ)
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	ք. Երևան, Շենգավիթ վարչական շրջան

Ներածական մաս. Համաձայն «Շող-Մակ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնահատման հաշվետվության՝ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Արտաշատի խճուղի 2/14 հասցեում նախատեսվում է արտադրական (կարի արտադրամաս) շենքի կառուցում: Նախատեսվող գործունեությունը 2022թ. հուլիսի 12-ին շրջակա միջավայրի նախարարության կողմից ստացել է պետական դրական փորձաքննական եզրակացություն (N-ԲՓ-0091-22):

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը փորձաքննության է ենթարկվում քաղաքաշինության բնագավառում որպես քաղաքաշինական գործունեության օբյեկտի կառուցում:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Երևանի համայնքի կողմից տրված 2021թ. դեկտեմբերի 22-ի N 01/18-07/1-Մ-17115-1140 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) հիման վրա անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված 0.483191 հա մակերեսով հողամասում՝ (կադաստրային ծածկագիրը՝ ծածկագիրը՝ 01-011-0399-0121), որի նպատակային նաշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Նախատեսվող արտադրամասը գտնվում է Երևանի Շենգավիթ վարչական շրջանի Արտաշատի խճուղի 2/14 հասցեում և իրենից ներկայացնում է կառուցապատված տարածք: Հողամասը երկու կողմերով սահմանագիծ ունի հարևան երեք հողամասերի հետ, իսկ մի մասով սահմանակցում է Արտաշատի խճուղու հետ:

Տարածքում առկա է վթարային մեկ մասնաշենք, որը ենթակա է քանդման: Քանդումն իրականացվելու է տեխնիկական միջոցներով (պայթեցում չի նախատեսվում):

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Հրազդան գետի ձախակողմյան ռադիալի Արարատյան լճա-ակունյատիվ հարթավայրի սահմաններում, որտեղ ~~ներքին~~ բացառակ նիշերը տատանվում են 913,34 մ - 914,57 մ սահմաններում:

Տեղամասում մինչև 22,0 մ խորությամբ փորված հորատանցքներով ստորերկրյա ջրեր են բացահայտվել և ըստ արխիվային նյութերի դրանք գտնվում են 30 մ խոր հորիզոններում:



Բնութագրվող տարածքը գտնվում է արդեն իսկ յուրացված և զարգացած քաղաքային միջավայրում, տեղանքում չկան էնդեմիկ կամ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ, ինչպես նաև բացակայում են տարածքով անցնող միգրացիոն ուղիները: Տարածքում և հարակից տարածքներում բացակայում են պատմամշակութային հուշարձանները:

Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Նպատակը կարի արտադրական տեղամասերի կազմակերպումն է:

Շինության տեխնիկա-տնտեսական ցուցանիշներն են՝

- ✓ հողի ընդհանուր մակերես - 4831.9 քմ;
- ✓ կառուցապատման մակերես - 4130 քմ (85,5 %);
- ✓ անջրանցիկ մակերես - 701,9 քմ;
- ✓ ստորգետնյա ավտոկայանատեղի՝ 80 մեքենայի համար:

Շենքը բաղկացած է լինելու երեք վերգետնյա և մեկ ստորգետնյա հարկերից: Ատորգետնյա հարկը ծառայելու է որպես ավտոկայանատեղի, իսկ արտակարգ իրավիճակների պայմաններում՝ որպես ապաստարան: ՀՀ-ում գործող նորմերին համապատասխան նախատեսվելու են անհրաժեշտ միջոցառումներ:

Տանիքը հարթ է, ջրահեռացումը կազմակերպված: Տանիքում նախատեսված է նաև կաթսայատան համար տարածք:

Մուտքը և ելքը տարածք նախատեսված է Արտաշատի խճուղուց:

Շենքում իրականացվելու է անհատական օդափոխման և ջեռուցման համակարգ, որոնց արտաքին բլոկները նախատեսվում է քողարկել հատուկ դրանց համար նախատեսված խորշերում և համապատասխան ձայնամեկուսիչ նյութերի օգտակործմամբ ապահովվելու է աղմուկի ցածր մակարդակ:

Արտադրամասերում և ադմինիստրատիվ սենյակներում նախատեսվել է օդի ներածման ու արտածման էներգիայի վերօգտագործմամբ համակարգ, իսկ ավտոկայանատեղիում և մնացած այլ օժանդակ սենյակներում օդի ներածման և արտածման իրարից անջատ համակարգեր:

Տարածքի պահանջվող սանիտարա-հիգիենիկ պայմաններն ապահովելու համար նախագծով նախատեսված է օդափոխության մեխանիկական դրդմամբ համակարգեր:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերին հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ՝ նախատեսվել են թեքահարթակներ:

Էլեկտրամատակարարումը, գազամատակարարումը, ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու են համաձայն գործող պայմանագրերի:

Սառը ջրամատակարարումը իրականացվելու է նախագծվող ներտարածքային ցանցից, իսկ տաք ջրամատակարարումը՝ կաթսաներից: Կենցաղային հոսքերը սանիտարատեխնիկական սարքավորումներից ինքնահոս խողովակներով հեռացվելու են ներտարածքային ցանց:

Օբյեկտի ընդհանուր շինարարության նորմատիվ տևողությունը կազմում է 5 տարի՝ շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից:

Շինարարական մեքենաներից և մեխանիզմներից օգտագործվելու են Ընկերությանը պատկանող ավտոինքնաթափ, կողային ավտոմեքենա, բետոնատար մեքենա, ձեռքի պնևմատոփիչ, էքսկավատոր, հետահար մուրճ և այլն: Շինարարական տեխնիկայի վատելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ մասնագիտացված սպասարկման կետերում:



Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ և այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, երեսպատման նյութեր և այլն, որոնք հողային ռեսուրսների պահպանության նպատակով տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա:

Շինհրապակում պահեստավորվելու են շինարարության համար անհրաժեշտ նյութերը, կայանվելու է շինտեխնիկան, ժամանակավոր շինությունները և այլն: Շինհրապարակում տեղադրվելու է մեքենաների անվադողերը լվանալու հարթակ:

Բետոնը և շաղախը մատակարարվելու են մոտակա բետոնաշաղախային հանգույցից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Նախատեսվող գործունեության հողային աշխատանքներից առաջացող ընդհանուր հողային հանույթը կազմում է 36300 մ³ է, որից հետլիցքը կազմում է 30800 մ³: Հետլիցքի համար նախատեսված հողային հանույթը կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և պարբերաբար կիրականացվի ջրցան՝ փոշեգոյացումը կանխելու նպատակով: 5500 մ³ վտանգավոր նյութերով չաղտոտված հողային հանույթը կհեռացվի ու կտեղադրվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Կենցաղային աղբը հավաքվելու է աղբահավաք տարողությունների մեջ և հեռացվելու է տարածքից մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով՝ տարածքում բացառելով կենցաղային աղբի կուտակումը և այրումը:

Շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբը գնահատվել է շուրջ 1680 խմ, ինչն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր՝ Էրեբունի վարչական շրջանի Նուբարաշենի խճուղի 4 հասցեում գտնվող տարածք:

Աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն ժամանակավոր կառույցների տեղադրմամբ՝ ապահովվելով շինհրապարակում սանիտարահիգիենիկ, կենցաղային և հանգստի պայմանները և այլն:

Աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար ջրօգտագործումն ընդհանուր կկազմի 9018 խմ/շին. ժամ:

Հաշվետվությունում ներկայացվել է նախատեսվող գործունեության աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային, ջրային ռեսուրսներ, մթնոլորտային օդ, կենսաբազմազանություն) և սոցիալական միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և մշակվել են միջոցառումներ՝ հնարավոր վնասակար ազդեցությունները կանխարգելելու կամ մեղմելու նպատակով:

Նախատեսվել են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմանն ուղղված մշտադիտարկումներ, այդ թվում՝

- ✓ Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ,
- ✓ Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ,
- ✓ Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- ✓ Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- ✓ Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կոլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում:



Բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկումների գումարային արժեքը գնահատվել է 3.000.000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Համաձայն Հաշվետվության՝ արտադրամասը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության և կադաստրի կոմիտեները, Երևանի քաղաքապետարանը, Շենգավիթ վարչական շրջանը: Հաշվետվությունը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի նստավայրում իրականացվել են երկու հանրային լսում: Նախատեսվող գործունեությունը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Ամփոփելով Հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առընչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում հետևել Հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկումների կատարմանը, դրանց չբավարարման դեպքում նախատեսել հավելյալ միջոցառումներ:
2. Շինարարական և քանդման աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի հեռացումն ու տեղադրումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
3. Բետոնի տեղափոխումն իրականացնել Հաշվետվությամբ նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
4. Անհրաժեշտ է արտադրական գոտում իրականացնել կանաչապատման աշխատանքներ՝ առաջնորդվելով Կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշման դրույթներով:
5. ՀՀ կառավարության 2002 թ. ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:



ԵՂՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Շող-Մակ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի Արտաշատի խճուղի 2/14 հասցեում նախատեսվող արտադրական (կարի արտադրամաս) շենքի կառուցման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն»
ՊՈԱԿ-ի տնօրեն՝




Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
առաջատար մասնագետ՝



Աստղիկ Վարդանյան